



<<Յունիբանկ>> ԲԲԸ Կանոնադրության փոփոխությունների նախագիծ

Բանկի կանոնադրական հիմնադրամի համալրման հետ կապված Բանկի Կանոնադրության 4-րդ գլխի 4.1 ենթակետի 1-ին մասը վերաշարադրվելու է հետևյալ կերպ.

4.1. Բանկի կանոնադրական հիմնադրամը կազմում է 20,489,652,500 (քսան միլիարդ չորս հարյուր ութսունհինգ միլիոն վեց հարյուր հիսուներկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ, որը ներառում է տեղաբաշխված 172,886,525 /մեկ հարյուր յոթանասուներկու միլիոն ութ հարյուր ութսունվեց հազար հինգ հարյուր քսանհինգ/ սովորական բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 100 /մեկ հարյուր/ ՀՀ դրամ անվանական արժեքով և 32,010,000 /երեսուներկու միլիոն տասը հազար/ հատ արտոնյալ հաստատագրված բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 100 /մեկ հարյուր/ ՀՀ դրամ անվանական արժեքով: Բանկի լրացուցիչ տեղաբաշխման ենթակա հայտարարված սովորական բաժնետոմսերի քանակը կազմում է 526,110,475 /հինգ հարյուր քսանվեց միլիոն մեկ հարյուր տասը հազար չորս հարյուր յոթանասունհինգ/ հատ՝ յուրաքանչյուրը 100 /մեկ հարյուր/ ՀՀ դրամ անվանական արժեքով:

Բանկի Կանոնադրության 8-րդ գլուխը վերաշարադրվելու է հետևյալ կերպ.

8. Բանկի շահույթի բաշխումը

8.1. Տարեկան գործունեության արդյունքում Բանկի ստացած համախառն եկամտի և օրենքով թույլատրված նվազեցումների դրական տարբերությունը՝ հարկվող շահույթը, ենթակա է հարկման՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրության համաձայն:

8.2. Բանկի զուտ շահույթը որոշվում է որպես Բանկի ստացած համախառն եկամտի, կատարված բոլոր նվազեցումների և վճարված շահութահարկի դրական տարբերություն:

8.3. Չուտ շահույթի բաշխումն իրականացվում է սույն կանոնադրությամբ և Ժողովի կողմից սահմանված ֆոնդերի համալրման, ինչպես նաև սովորական և արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերին շահաբաժինների վճարման նպատակով:

8.4. Բանկն իրավունք ունի որոշում ընդունել (հայտարարել) իր բաժնետերերին եռամսյակային, կիսամյակային կամ տարեկան շահութաբաժինների վճարման մասին: Շահութաբաժինները կարող են վճարվել դրամով, ինչպես նաև այլ գույքով, այդ դեպքում՝ Բանկի բաժնետոմսերով:

8.5. Միջանկյալ (եռամսյակային և կիսամյակային) շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունում է Խորհուրդը: Տարեկան շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունում է Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովը՝ Խորհրդի առաջարկությամբ՝ սահմանելով նաև վճարման ժամկետը:

8.6. Բանկի բաժնետերերին շահաբաժիններ բաշխելն արգելվում է, եթե լրիվ չի վճարվել Բանկի հայտարարված կանոնադրական հիմնադրամը, ինչպես նաև եթե տվյալ պահին Բանկի կրած կորուստները (վնասները) հավասար են կամ գերազանցում են Բանկում առկա չբաշխված զուտ շահույթի գումարը:

<<Յունիբանկ>> ԲԲԸ սովորական անվանական բաժնետոմսերի լրացուցիչ թողարկման արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն

Բանկի սովորական բաժնետոմսերի լրացուցիչ թողարկման արդյունքում Բանկի կանոնադրական հիմնադրամը համալրվելու է 1,396,274,900 /մեկ միլիարդ երեք հարյուր ինսունվեց միլիոն երկու հարյուր յոթանասունչորս հազար ինը հարյուր/ ՀՀ դրամով և սովորական բաժնետոմսերի թիվը ավելանալու է 13,962,749 /տասներեք միլիոն ինը հարյուր վաթսուներկու հազար յոթ հարյուր քառասունինը/ հատով՝ յուրաքանչյուրը 100 /մեկ հարյուր/ ՀՀ դրամ անվանական արժեքով:

Проект изменений в Устав ОАО «Юнибанк»

В связи с пополнением уставного капитала Банка часть первая подпункта 4.1 главы 4 Устава Банка будет переизложена следующим образом:

4.1 Уставный капитал Банка составляет 20,489,652,500 (двадцать миллиардов четыреста семьдесят девять миллионов шестьсот пятьдесят две тысячи пятьсот) драм РА, который включает 172,886,525 (сто семьдесят два миллиона восемьсот восемьдесят шесть тысяч пятьсот двадцать пять) штук размещенных обыкновенных акций, каждая с номинальной стоимостью 100 (сто) драм РА и 32,010,000 (тридцать два миллиона десять тысяч) штук привилегированных фиксированных акций, каждая с номинальной стоимостью 100 (сто) драм РА.

Количество объявленных обыкновенных акций Банка, подлежащих дополнительному размещению, составляет 526,110,475 /пятьсот двадцать шесть миллионов сто десять тысяч четыреста семьдесят пять/ штук, каждая с номинальной стоимостью 100 /сто/ драм РА.

Глава 8 Устава Банка будет переизложена следующим образом:

8. Распределение прибыли Банка

8.1. Положительная разница между валовой прибылью Банка, полученной в результате годовой деятельности, и разрешенными законом убавлениями – налогооблагаемая прибыль, подлежит налогообложению, согласно Налоговому кодексу Республики Армения.

8.2. Чистая прибыль Банка определяется как положительная разница между полученной Банком валовой прибылью, всех произведенных убавлений и выплаченным налогом на прибыль.

8.3. Распределение чистой прибыли производится для пополнения фондов, установленных настоящим Уставом и Собранием, а также для выплаты дивидендов владельцам обыкновенных и привилегированных акций.

8.4. Банк имеет право принять решение (объявить) о выплате своим акционерам квартальных, полугодовых или годовых дивидендов. Дивиденды могут быть выплачены в виде денежных средств, а также иного имущества, в том числе в виде акций Банка.

8.5. Решение о выплате промежуточных (квартальных и полугодовых) дивидендов, размере дивиденда и форме его выплаты принимает Совет. Решение о выплате годовых дивидендов, размере дивиденда и форме его выплаты принимает Общее собрание акционеров Банка по предложению Совета, с установлением также срока выплаты.

8.6. Запрещается распределять дивиденды акционерам Банка, если полностью не оплачен объявленный уставный капитал Банка, а также если на данный момент понесенные потери (убытки) Банка равны либо превышают сумму нераспределенной чистой прибыли Банка.

Информация о результатах дополнительного выпуска обыкновенных именных акций ОАО «Юнибанк»

В результате дополнительного выпуска обыкновенных акций Банка уставный капитал Банка пополнится на 1,396,274,900 (один миллиард триста девяносто шесть миллионов двести семьдесят четыре тысячи девятьсот) драм РА и количество обыкновенных акций увеличится на 13,962,749 (тринадцать миллионов девятьсот шестьдесят две тысячи семьсот сорок девять) штук, каждая с номинальной стоимостью 100 (сто) драм РА.